Հաստատված է
Հայաստանի եվրոպական Համալսարանի
գիտական խորհրդի
2022 թվականի հոկտեմբերի 24-ի
թիվ 39 նիստում
Ռեկտոր՝ Հ. Բիշարյան

Approved by
the Scientific Council of the
European University of Armenia
October 24, 2022
Session N 39,
Rector: H. Bisharyan

_____
(Ստորագրություն, Կ.Տ./Signature)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՆ ԿԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

CHARTER OF THE INTERNATIONAL CLUB ESTABLISHED AT THE FACULTY OF LAW AND INTERNATIONAL RELATIONS OF THE EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA

ԵՐԵՎԱՆ/YEREVAN 2022

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Եվրոպական համալսարանի (այսուհետ՝ ՀԵՀ) Իրավագիտությունև Միջազգային հարաբերություններ ֆակուլտետին կից ստեղծվող Միջազգային ակումբը (այսուհետ՝ Ակումբ) ուսանողական կազմակերպություն է:

1.2. Ակումբը ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն է:

1.3. Ակումբը նպաստում է ուսանողների գիտական, ստեղծագործական, բարոյա-կան և հոգևոր զարգացմանը:

1.4. Ակումբը իր գործունեությունը իրականացնելու է ՀՀ Սահմանադրու-թյանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ՀԵՀ կանոնադրու-թյանը և սույն կանոնադրու-թյանը համապատասխան: Ակումբի կանոնադրությունը ընդունվում է ակումբի համագումարի կողմից:

1.5. ՀԵՀ Միջազգային ակումբի ամբողջական անվանումն է՝ հայերեն՝ Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտություն և Միջազգային հարաբերություններ ֆակուլտետին կից ստեղծված Միջազգային ակումբ, ռուսերեն՝ Международный клуб создан при факультете юриспруденции и международных отношений Европейского университета Армении, անգլերեն՝ The International Club established at the Faculty of Law and International Relations of the European University of Armenia.

1.6. Միջազգային ակումբի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0037, Դավիթ Անհաղթ 11, Հայաստանի Եվրոպական համալսարան:

1. GENERAL PROVISIONS

1.1. The International Club (hereinafter referred to as Club) established at the Faculty of Law and International Relations of the European University of Armenia (hereinafter referred to as EUA) is a student organization.

1.2. The Club is a non-political and non-party organization.

1.3. The Club contributes to the scientific, creative, moral and spiritual development of students.

1.4. The Club will carry out its activities in accordance with the Constitution of the Republic of Armenia, the current legislation of the Republic of Armenia, the Charter of the Republic of Armenia and this Charter. The charter of the Club is adopted by the Club Assembly.

1.5 The full name of the International Club is:
Armenian: Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտություն և Միջազգայինհարաբերություններ ֆակուլտետին կից ստեղծված Միջազգային ակումբ,
Russian: Международный клуб создан при факультете юриспруденции и международных отношений Европейского университета Армении
English: The International Club established at the Faculty of Law and International Relations of theEuropean University of Armenia.

1.6. The address of the International Club is 0037, Davit Anhaght 11, European University of Armenia; Yerevan, RA

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ակումբի նպատակներն ու խնդիրներն են՝

ա/ համախմբել տարբեր մասնագիտություն

2. AIMS AND MAIN DIRECTIONS OF ACTIVITY

The aims and objectives of the Club are:

ունեցող անհատների մեկ սեղանի շուրջ,
բ/ ստեղծել հաղորդակցման, քննարկումների, կարծիքների փոխանակման, բանավեճերի և կրթության հարթակ,
գ/ իրականացնել տարբեր մշակութային և գիտաճանաչողական միջոցառումներ,
դ/ ստեղծել վերլուծական և քննարկումների հարթակ,
ե/ խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր մշակութային և ստեղծագործական զարգացմանը,
զ/ կազմակերպել ուսանողների ազատ ժամանց,
է/ մասնակցել տարբեր միջոցառումների և հանդիպումների,
ը/ ինչպես նաև կազմակերպել կանոնադրության 2-րդ հոդվածում չնշված ուսանողներին հետաքրքրող միջոցառումներ և հավաքներ:

a/ bring together individuals with different professions around one table,
b/ to create a platform for communication, discussions, exchange of opinions, debates and education,
c/ carry out various cultural and scientific-cognitive events,
d/ to create an analytical and discussion platform,
e/ to promote scientific, educational, spiritual, cultural and creative development of students,
f/ to organize students' entertainment,
g/ to participate in various events and meetings,
h/ as well as to organize events and gatherings of interest to students not mentioned in provision 2 of the Charter.

3.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

3.1. Ակումբի բարձրագույն մարմինը Ակումբի Համագումարն է: Համագումարին լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում են ակումբի ղեկավարող և կազմակերպչական անձնակազմը:
3.2. Համագումարի անդամների կազմը համալրվում է առնվազն տարին մեկ անգամ՝ ղեկավարող և կազմակերպող անդամների ձայների մեծամասնությամբ:
3.3. Ընտրություններին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերը: Բակալավրիատի առաջին կուրսի ուսանողները կարող են ընտրություններին մասնակցել միայն 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում:
3.4. Անդամ կարող են դառնալ ուսանողները, ովքեր վերջին երկու կիսամյակում ապահովել են ՄՈԳ-ի 65 տոկոսը, իսկ առաջին կուրսի դեպքում դիտարկվում է միայն մեկ

3. THE ASSEMBLY OF THE INTERNATIONAL CLUB

3.1. The highest body of the Club is the Assembly of the Club. The management and administrative staff of the Club participate in the assembly with full voting rights.

3.2. The membership of the Assembly is replenished at least once a year by the majority of the votes of the management and administrative members.
3.3. All undergraduate and graduate course groups participate in the elections. First-year BA students can participate in the elections only in the second semester of the first year.

3.4. Students who have provided 65 percent of the GPA in the last two semesters can become members, and in the case of the first year, only the results of one semester are considered.

կիսամյակի արդյունքները:

3.5. Ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, ներկաների ձայների թվի պարզ մեծամասնությամբ:

3.6. Համագումարը հրավիրվում է առնվազն տարին մեկ անգամ՝ Ակումբի նախագահության կողմից: Անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել արտահերթ համագումարներ:

3.7. Համագումարը՝

ա/ ընդունում է ակումբի կանոնադրությունը, փոփոխությունները և լրացումներ կատարում նրանում,

բ/ լսում և հաստատում է ակումբի նախագահության տարեկան հաշվետվությունը,

գ/ քննարկում և սահմանում է ակումբի տարեկան գործունեության կարևորագույն ուղղությունները և առաջիկա տարվա ծրագրային առաջնահերթությունները,

դ/ որոշում է կազմում ակումբի վերակազմավորման վերաբերյալ,

ե/ բաց քվեարկությամբ հաստատում է նախագահության կազմը,

զ/ ընտրում է ակումբի վերաստուգիչ հանձնաժողովի անդամներին:

3.8. Սույն կետի ա/ և դ/ ենթակետերով սահմանված հարցերը քննարկելիս որոշումները ընդունվում են Համագումարի անդամների թվի 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում, իսկ մյուս հարցերը՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

3.5. The election is made by open voting, by a simple majority of the number of votes of those present.

3.6. The assembly is convened at least once a year by the presidency of the club. If necessary, extraordinary assemblies can be convened.

3.7. The assembly:

a/ approves the charter of the Club, makes changes and additions to it,

b/ hears and approves the annual report of the Club presidency,

c/ discusses and defines the most important directions of the Club's annual activity and program priorities for the coming year,

d/ makes a decision on the reorganization of the Club,

e/ approves the staff of the authorities by open vote,

f/ elects the members of the audit committee of the Club.

3.8. When discussing the issues specified in subprovisions a/ and d/ of this provision, the decisions are adopted if 2/3 of the members of the Assembly vote in favor, and other issues by a simple majority of votes.

4. ԱԿՈՒՄԲԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում Ակումբի աշխատանքները ղեկավարում է ակումբի նախագահությունը:

4.2. Ակումբի առաջին Նախագահության անդամներ են հանդիսանում Ակումբը հիմնադրող ՀԵՀ ուսանողները:

4.3. Նախագահության անդամները ընտրվում են անդամների նիստում, որին

4. THE PRESIDENCY OF THE CLUB

4.1. During the period between assemblies, the Club's activities are managed by the Club's presidency.

4.2. The members of the first Presidency of the Club are the students of EUA who founded the Club.

4.3 The members of the presidency are elected at the members' session, in which the

լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում է ակումբի նախագահը: Ընտրությունը իրակա-նացվում է բաց քվեարկությամբ, ներկաների թվի պարզ մեծամասնությամբ, եթե այդ մասին այլ որոշում չի կայացվում: Նախագահության կազմը հաստատվում է Համագումարի կողմից:

4.4. Նախագահության անդամներ կարող են ընտրվել ուսանողներ, ովքեր վերջին երկու կիսամյակի ընթացքում ապահովել են ՄՈԳ-ի 65 տոկոսը: Առաջին կուրսի ուսանողները չեն կարող ընտրվել նախագահության կազմ:

4.5. Անհրաժեշտ քվեներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:

4.6. Նախագահությունը իր կողմից առնվազն մեկ տարի ժամկետով ընտրում է նախագահ, նախագահի տեղակալ(ներ), պա-տասխանատու քարտուղար, հանձնաժողովի նախագահներ:

4.7. Ակումբի նախագահ կարող է ընտրվել միայն ՀԵՀ ուսանող:

4.8. Ակումբի նախագահը չի կարող առաջադրվել ՀՀ որևէ քաղաքական կուսակցությանը անդամակցող թեկնածու:

4.9. Ակումբի նախագահի ընտրությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ: Նախագահի տեղակալի, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովի նախագահների ընտրությունը կատարվում է բաց քվեարկու-թյամբ, եթե այդ մասին այլ որոշում նախագահության կողմից չի կայացվում:

4.10. Ընտրված է համարվում այն թեկ-նածուն, որի օգտին քվեարկում է ներկաների կեսից ավելին: Անհրաժեշտ ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ներկաների պարզ մեծամասնությունը:

Chairperson of the club participates with full voting rights. The election is carried out by open voting, by a simple majority of the number of those present, if no other decision is made. The composition of the presidency is approved by the Assembly.

4.4. Students who have provided 65 percent of the GPA during the last two semesters can be elected members of the presidency. First-year students cannot be elected to the presidency.

4.5. If the necessary votes are not collected, the two candidates with the maximum number of votes go to the second round. In the second round, the candidate with the most votes is considered elected.

4.6. The presidency elects the Chairperson, deputy chairperson(s), responsible secretary, commission heads for a period of at least one year.

4.7. Only EUA students can be elected Chairperson of the Club.

4.8. The Chairperson of the Club cannot be nominated as a candidate belonging to any political party of the Republic of Armenia.

4.9. The election of the Chairperson of the Club is done by closed, secret voting. The election of the deputy Chairperson, responsible secretary, committee heads is done by open voting, if no other decision is made by the presidency.

4.10. The candidate for whom more than half of the attendees vote is considered elected. In case of not getting the necessary votes, the two candidates who got the most votes go to the second round. In the second round, the candidate who is voted for by the simple majority of those present is elected.

4.11. Ակումբի նախագահության անդամների կեսից ավելի փոփոխության դեպքում կատարվում է Ակումբի նախագահի նոր ընտրություն:

4.12.Նախագահի տեղակալների, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովների նախագահների թեկնածությունները առաջադրվում են նախագահության անդամների կազմից:

4.13. Սահմանված ժամկետը լրանալու կամ ՀԵՀ-ում ուսումն ավարտելու դեպքում, բացառությամբ ուսումը ասպիրանտուրայում շարունակելու դեպքից, Ակումբի նախագահը վայր է դնում իր լիազորությունները: Այդ դեպքում հայտարարվում են Ակումբի նախագահի նոր ընտրություններ:

4.14. Ակումբի նախագահի տեղակալը (մեկից ավելի տեղակալների առկայության դեպքում՝ նախագահի կողմից լիազորված տեղակալը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Նախագահության կողմից լիազորված տեղակալը) նախագահի բացակայության ժամանակ վերջինիս լիազորությամբ ողջ ծավալով կատարում է նախագահի պարտականությունները:

4.15. Պատասխանատու քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները, վարում համապատասխան արձանագրությունները:

4.16. Ակումբի նախագահությունը՝

ա/ միջոցներ է ձեռնարկում Ակումբի Համագումարի որոշումները իրականացնելու համար,

բ/ հաստատում է Ակումբի նախագահության, քարտուղարության և այլ անդամների աշխատանքները,

գ/ լսում է զեկուցումներ կատարվող աշխատանքի վերաբերյալ,

դ/ կարող է անվստահություն հայտնել ՈՒԽ նախագահին, նախագահության անդամներին և ֆակուլտետի նախագահներին,

4.11. In case of change of more than half of the members of the Club's presidency, a new election of the Club Chairperson is held.

4.12. Nominations for deputy Chairpersons, responsible secretaries, commission heads are nominated from among the members of the presidency.

4.13. In case of expiration of the defined term or completion of studies at EUA, except for the case of continuing studies in post-graduate studies, the Chairperson of the Club resigns his powers. In that case, new elections for the Chairperson of the Club are announced.

4.14. The deputy Chairperson of the Club (in the presence of more than one deputy, the deputy authorized by the Chairperson, and in his/her absence, the deputy authorized by the Presidency) performs the duties of the Chairperson to the full extent in the absence of the Chairperson with the authority of the latter.

4.15. The responsible secretary manages the activities of the secretariat, manages the relevant minutes.

4.16. The presidency of the Club:

a/ takes measures to implement the decisions of the Club Assembly,

b/ approves the activities of the Club's presidency, secretariat and other members,

c/ listens to reports on the activities being done,

d/ can express no confidence in the president of the SC, members of the presidency and the presidents of the faculty,

e/ can hear and solve any question related to the competence of the Club.

ե/ կարող է լսել և լուծել Ակումբի իրավասությանը վերաբերող ցանկացած հարց:

4.17. Ակումբի նախագահությունը նիստեր է գումարում ամիսը առնվազն մեկ անգամ: Կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

4.17. The presidency of the club convenes sessions at least once a month. Extraordinary sessions may be held.

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

5.1. Ակումբի ֆինանսական միջոցները գոյանում են անդամների և մասնակիցներ ի հատկացումներից և այլ նվիրատվություններից:

5. FINANCIAL RESOURCES

5.1 The Club's financial resources are formed from the allocations of members and participants and other donations.

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Հիմնված լինելով Իրավագիտություն և Միջազգային հարաբերություններ ֆակուլտետին կից՝ Ակումբը ենթարկվում է ֆակուլտետի կանոններին և ղեկավար անձնակազմին:

6.2. Ակումբն իր գործունեությունը ծավալում է ֆակուլտետի դեկանի համաձայնությամբ և իմացությամբ:

6. OTHER PROVISIONS

6.1 Adjected to the Faculty of Law and International Relations, the Club is subject to the rules and management staff of the Faculty.

6.2 The club carries out its activities with the consent and knowledge of the dean of the faculty.